

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա առթիվ

Սիրելի կանայք, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ:

Անուրանալի և չափազանց մեծ է ձեր ավանդը պետության ու նրա հիմքը հանդիսացող ընտանիքների ամրության, պետության արժանի քաղաքացիների դաստիարակության գործում: Դուք ձեր նվիրվածությամբ, անսպառ բարությամբ, հոգատարությամբ, ծով համբերությամբ ու սիրով ամենադժվարին իրավիճակներում մշտապես աջակից ու զորավիգ եք եղել և՛ ձեր ընտանիքներին, և՛ մեր պետությանը: Մեր ժողովրդի բազմադարյա պատմության մեջ քիչ չեն եղել օրհասական պահերին հայ կնոջ դրսևորած բացառիկ արիության ու տոկունության դրվագները, որոնք ուսանելի օրինակ են ապագա սերունդների համար:

Համոզված եղեք, որ ձեր անսպառ բարությունը, նվիրվածությունն ու հոգատարությունը աննկատ չեն մնում: Այս տոնը ոչ թե հիշեցնում է ձեր մասին, այլ՝ ևս մեկ անգամ ընդգծում ձեզ որպես կին, մայր, որպես քույր ու դուստր, ընդգծում ձեր ներկայությունն ու մասնակցությունը ոչ միայն մարդկանց անձնական, այլ պետության ու հասարակության կյանքում ընդհանրապես:

Ձեր անսպառ լավատեսությամբ, բարությամբ ու անհատնում համբերությամբ, դժվարությունները դիմակայելու անբացատրելի կարողությամբ, ընտանիքին ձեր անմնացորդ նվիրումով դուք, սիրելի կանայք, ամբողջացնում եք հայ կնոջ կերպարը, ինչի համար արժանի եք ամենաբարձր գնահատանքի:

Ու քանի որ ձեր տոնը համընկնում է բնության զարթոնքի հետ, մաղթում եմ, որ ձեր կյանքի յուրաքանչյուր օրը առլեցուն լինի գարնան բույրով, արևով, ուրախ ու բարձր տրամադրությամբ:

Քաջառողջություն, երջանկություն, անսահման սեր ու ջերմություն ձեզ, սիրելի՛ կանայք, մայրեր, քույրեր ու աղջիկներ: